

## ՆԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԿԵՏՈՒԹՅԱՆ ՆԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՆԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Նայաստանի Նանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը էներգետիկայի, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), փոստային կապի (ունիվերսալ ծառայությունների մասով), երկաթուղային փրանսպորտի (ենթակառուցվածքի օգտագործման վճարի սահմանման մասով), փրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների մասով) բնագավառներում և ջրային ոլորտում կարգավորող մարմին է, որը գործում է, «Նանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», «էներգետիկայի մասին», «էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Փոստային կապի մասին», «Երկաթուղային փրանսպորտի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով փրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին» Նայաստանի Նանրապետության օրենքներով և Նայաստանի Նանրապետության ջրային օրենսգրքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Նայաստանի Նանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետև՝ հանձնաժողով) 2009 թվականին գործել է հետևյալ կազմով.

Ռոբերտ Նազարյան՝	հանձնաժողովի նախագահ
Նիկոլայ Գրիգորյան՝	հանձնաժողովի նախագահի տեղակալ
Շիրազ Կիրակոսյան՝	հանձնաժողովի անդամ
Սամվել Արաբաջյան՝	հանձնաժողովի անդամ
Մուշեղ Կոչեցյան՝	հանձնաժողովի անդամ

Նանձնաժողովն իր աշխատանքը կազմակերպել է աշխատակազմի միջոցով, որն ունի հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները.

- սակագնային քաղաքականության վարչություն՝
  - ա) սակագնային բաժին,
  - բ) ֆինանսական վերլուծության բաժին,
- իրավաբանական և լիցենզավորման վարչություն,
- լիցենզավորված գործունեության մոնիթորինգի և ներդրումային ծրագրերի վարչություն՝
  - ա) տեխնիկական մոնիթորինգի և փորձաքննության բաժին,

- բ) ներդրումային ծրագրերի բաժին,
- հեռահաղորդակցության վարչություն,
- սպառողների հետ կապերի բաժին,
- փնտեսական բաժին,
- անձնակազմի կառավարման բաժին,
- հաշվապահական հաշվառման բաժին:

Նանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքը, «Քաղաքացիական ծառայության մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի համաձայն, համակարգում է հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը:

### **1. Կարգավորման օրենսդրական դաշտի կարարելագործում**

Նանձնաժողովի կարևորագույն գործառնություններից է կարգավորման օրենսդրական դաշտի շարունակական կարարելագործումը՝ ելնելով սպառողների և կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության ու շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, կարգավորվող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումների խրախուսման և կարգավորման դաշտի թափանցիկության ապահովման առաջնահերթություններից:

2009 թվականին շարունակվել են էներգետիկայի բնագավառի կարգավորման իրավական դաշտի կարարելագործման ուղղությամբ փարվող աշխատանքները:

Նպատակ ունենալով բարձրացնել էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց կողմից «Էներգետիկայի մասին» ՆՏ օրենքի, հանձնաժողովի իրավական ակտերի և լիցենզիայի պայմանների չկարարման կամ ոչ պարզաճ կարարման դեպքում փուլերի կիրառման մեխանիզմի արդյունավետությունը, հանձնաժողովը 2009 թվականի ընթացքում ձեռնամուխ է եղել «Էներգետիկայի մասին» ՆՏ օրենքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կարարելու գործընթացին. մշակվել է օրենքի նախագիծ, որով նախատեսվում է իրավախախտ լիցենզավորված անձանց նկատմամբ կիրառել նաև ֆինանսական բնույթի պարտավորություններ՝ փուլանքներ: Այն հավանության է արժանացել ՆՏ կառավարության կողմից և ներկայացվել է ՆՏ Ազգային ժողով:

Նայասրանի Նանրապետությունում գործարար միջավայրի, ինչպես նաև սպառողների սպասարկման մակարդակի բարելավման նպատակով հանձնաժողովը 2009 թվականին լրամշակել է էներգետիկայի բնագավառի կարգավորման իրավական դաշտի կարարելագործմանն ուղղված մի շարք իրավական ակտեր, մասնավորապես, էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններում ամրագրված նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական

ցանցին միացման պայմանները՝ սահմանելով միացման գործընթացի առանձին փուլերի իրականացման առավելագույն ժամկետներ: Ճարտարապետահարակազմային առաջադրանքը ձևավորելու փուլում կառուցապարտողների կողմից կոմունալ ծառայությունների միացման արժեքի կազմակերպման պայմանների ստացման համար «Մեկ պարուհանի» համակարգի ներդրումն ապահովելու նպատակով համապարասխան լրացումներ են կատարվել բնական գազի և էլեկտրական էներգիայի մատակարարման ու օգտագործման կանոններում: Ընդ որում, բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններում ու պայմանագրերում հստակեցվել են սպառողներին բնական գազի համար կանխավճարի պահանջ ներկայացնելու դեպքերը՝ բացառելով մատակարարի կողմից դրա անհարկի կիրառման հնարավորությունը:

ՆՇ ջրային օրենսգրքի համաձայն, ջրային համակարգում սակագնային քաղաքականությունն իրականացնում և ոչ մրցակցային ջրամատակարարներին ջրային համակարգերի օգտագործման թույլտվությունները տրամադրում է հանձնաժողովը: Մակայն, հարկ է նշել, որ ջրային օրենսգրքում առկա թերություններն ու բացթողումները, մասնավորապես, կարգավորող մարմնին վերապահված իրավասությունների չափից ավելի ընդհանուր և ոչ հստակ սահմանումը, ոլորտում սպառողների և կարգավորվող անձանց շահերի հավասարակշռման հիմնարար սկզբունքի ապահովման համար կարգավորող մարմնի անհրաժեշտ լիազորությունների բացակայությունը (ջրամատակարարման և ջրահեռացման պայմանագրերի օրինակելի ձևերի և խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների սահմանում), կարգավորվող անձանց գործունեության վերահսկման գործուն լծակների, ինչպես նաև վերջիններիս կողմից իրավախախտ վարքագծի դրսևորման դեպքերում տույժեր և տուգանքներ կիրառելու իրավասությունների բացակայությունը, էապես խոչընդոտում են արդյունավետ և ամբողջական կարգավորման գործընթացը: Նշված թերությունների և բացթողումների վերացման նպատակով հանձնաժողովը 2009 թվականին ևս հանդես է եկել համապարասխան առաջարկություններով, մասնակցել կազմակերպված քննարկումներին և աշխարանքային խմբերի աշխատանքներին:

Նույն ժամանակահատվածում ՆՇ ջրային օրենսգրքի, «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին», «Նամապիրության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՆՇ օրենքների վերլուծության արդյունքում հանձնաժողովը առաջարկություններ է ներկայացրել բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերը ջրամատակարար ընկերություններին փոխանցելու հարցի վերաբերյալ:

2009 թվականին հանձնաժողովը մասնակցել է նաև «Լոռի-ջրնուղկոյուղի», «Շիրակ-ջրնուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների մասնավոր կառավարման պայմանագրի նախագծի և մրցույթի հրավերի փաթեթի մշակման աշխատանքներին:

Նեոահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառն իր բազմաբնույթ խնդիրներով շարունակում է մնալ հանձնաժողովի գործունեության գերակա ուղղություններից մեկը:

2009 թվականին հանձնաժողովը գործուն մասնակցություն է ունեցել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Նայասփանի Նանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Նայասփանի Նանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Նայասփանի Նանրապետության օրենքների, ինչպես նաև Նայասփանի Նանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նախագծերի մշակման աշխատանքներին՝ ներկայացնելով սկզբունքային դիտողություններ և առաջարկություններ: Բացի այդ, Եվրոպական հարևանության և գործընկերության ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակում առաջարկություններ են ներկայացվել էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում կարգավորման իրավական դաշտը եվրոպական դիրեկտիվներին համապատասխանեցնելու վերաբերյալ: Իրականացվել է նաև ՆՏ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և ՆՏ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի իրավասությունների միջև առկա հակասությունների իրավական վերլուծություն և դրանց վերացման նպատակով ներկայացվել են օրենսդրական առաջարկություններ:

2009 թվականին մեծածավալ աշխատանք է փարվել էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՆՏ օրենքով հանձնաժողովին վերապահված գործառնությունների իրականացման ուղղությամբ: Մասնավորապես, մարուցվող ծառայությունների տեսականու և դրանց որակի բարձրացմանը զուգահեռ, աշխատանքներ են փարվել բաժանորդների սպասարկման որակի բարձրացմանն ուղղված իրավական ակտերի, ինչպես նաև էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների ազատականացված շուկա մուտք գործող ընկերությունների միջև մրցակցությունը խթանելու նպատակով վերջիններիս փոխհարաբերությունները կարգավորող իրավական ակտերի մշակման և ներդրման ուղղությամբ:

Նանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի օպերատորների կողմից միջազգային զանգերի տերմինացիա իրականացնելու իրավական դաշտը հստակեցնելու նպատակով, ինչպես նաև հաշվի առնելով, որ միջազգային զանգերի տերմինացիայի իրականացման կարգավորումն անհրաժեշտ է հանրային էլեկտրոնային հաղորդակցու-

թյան ենթակառուցվածքների հեփազա գարգացման և արդար մրցակցության ապահովման համար, հանձնաժողովը 2009 թվականի փետրվար ամսին կանոնակարգել է միջազգային զանգերի փերմինացիա իրականացնելու պայմանները:

Նկարի ունենալով, որ արբանյակային հաղորդակցության համակարգերի լայնափարած ներդրումը և դրանց հիման վրա մափուցվող ծառայությունների ընդլայնումը ուղղակիորեն կնպաստեն հեռահաղորդակցության ծառայությունների մափուցման ոլորտում փնտեսական մրցակցության աճին և որպես արդյունք՝ կհանգեցնեն այդ ծառայությունների գների նվազեցմանն ու հանրության համար դրանց առավել մափզելիությանը, հանձնաժողովի համապափասխան որոշմամբ նվազեցվել են արբանյակային կապի համար հափկացվող ռադիոհաճախականությունների թույլփվությունների փրամադրման և ռադիոհաճախականությունների օգփազործման վճարները:

2009 թվականին մշակվել և հասփափվել է նաև ելքային միջազգային ձայնային ծառայություններ մափուցող անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող հաշվեփվության ձևը, որում ներառված փեղեկափվությունն անհրաժեշտ է համապափասխան վերլուծության և մափուցված ծառայությունների որակի վերահսկման ու կարգավորման համար: Կանոնակարգվել է նաև սիրողական ռադիոյի վերաբերյալ իրավական դաշտը. հասփափվել են սիրողական ռադիօալերափորների թույլփվությունների դասակարգման և փրամադրման, սիրողական ռադիոկայանների գրանցման, փեղադրման և օգփազործման կանոնները, ինչպես նաև որակավորման չափանիշներին սիրողական ռադիօալերափորների համապափասխանությունն սփուգելու կարգը:

## **2. Սակագնային քաղաքականություն**

Հանձնաժողովի կողմից իրականացվող սակագնային քաղաքականությունը հիմնվում է համաշխարհային պրակտիկայում ընդունված անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքի վրա և նպափասխատողված է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականոն փնտեսական գործունեության ապահովմանը, ինչպես նաև սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով իրականացնելու արդիականացման և հեռանկարային գարգացման ծրագրեր:

2009 թվականի փետրվար ամսին «ՆայՌուսգազարդ» փակ բաժնեփիրական և «Տրանսգազ» սահմանափակ պափասխանափվությամբ ընկերությունները հայտեր են ներկայացրել հանձնաժողով՝ վերանայելու գազամափակարարման համակարգի սակագները: Նաշվի առնելով 2009 թվականի ապրիլի 1-ից հանրապեփություն ներկրվող բնական գազի գնի թանկացումը, ինչպես նաև 2007-2008 թվականներին գազամափա-

կարարման համակարգում իրականացված ներդրումների փոխհատուցման, գազամա-  
րակարարման ընդլայնման հետ կապված որոշ շահագործման և պահպանման  
ծախսերի փոփոխություններն ու 2009 թվականի պետական բյուջեում ամրագրված ՆՏ  
դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի մեծությունը, հանձնաժողովը վերանայել և սահմանել է  
սպառողներին վաճառվող բնական գազի, գազամարակարարման համակարգի  
օպերատորի ծառայության մատուցման, ինչպես նաև փոխադրման և բաշխման նոր  
սակագներ:

Նաշվի առնելով 2009 թվականի ապրիլի 1-ից «Նրագդանի ԶԷԿ» և «Երևանի ԶԷԿ»  
փակ բաժնետիրական ընկերություններին վաճառվող բնական գազի նոր սակագները,  
«Նայասրանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության համար  
հասարակած էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիայի պայմանները և հիմք  
ընդունելով էլեկտրական էներգիայի արտադրության ու սպառման կանխապեսումները,  
Ֆինանսական հաշվետվություններով ներկայացված փաստացի ծախսերի և  
2008 թվականին էլեկտրաէներգետիկական համակարգում իրականացված ներդրում-  
ների վերլուծության արդյունքները, միջուկային վառելիքի թանկացումը, 2009 թվականի  
պետական բյուջեում ամրագրված ՆՏ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի մեծությունը և մի  
շարք այլ գործոններ, հանձնաժողովը վերանայել է էլեկտրաէներգետիկական համա-  
կարգի ընկերությունների սակագները:

Էլեկտրաէներգետիկական համակարգի ֆինանսական կայունությունն ապահովելու  
և 2009 թվականի ապրիլի 1-ից վերջնական սպառողներին վաճառվող էլեկտրական  
էներգիայի սակագնի 5 դրամից ավելի աճ թույլ չտրալու նպատակով, ՆՏ էներգետիկայի և  
բնական պաշարների նախարարության առաջարկության համաձայն, էլեկտրաէներ-  
գետիկական համակարգում առաջացող լրացուցիչ ֆինանսական ճեղքվածքը փակվել է  
«Որոտանի ՆԷԿՆ» ՓԲԸ-ից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) սակագնի  
հաշվարկում ներառված շահույթի և մաշվածության ծախսային հոդվածների նվազեց-  
ման հաշվին, որի արդյունքում 2009 թվականի ապրիլի 1-ից գործողության մեջ են մտել  
վերջնական սպառողներին վաճառվող էլեկտրաէներգիայի նոր սակագներ: Միաժամա-  
նակ, վերանայվել են «Երևանի ԶԷԿ» ՓԲԸ-ի կողմից «Նաիրիպ Գործարան» ՓԲԸ-ին  
առաքվող ջերմային էներգիայի սակագներն ու օգտակար ջերմային պահանջարկի  
հիման վրա համակցված արտադրության րեդակայանքներից առաքվող էլեկտրական  
էներգիայի սակագնի առավելագույն մեծությունը:

Նաշվի առնելով 2009 թվականի ապրիլի 1-ից գործող սակագներում ներառված և  
2009 թվականի ապրիլ-օգոստոս ամիսներին ձևավորված ՆՏ դրամ/ԱՄՆ դոլար (եվրո)  
միջին ամսական փոխարժեքների էական փոփոխությունը, 2009 թվականի սեպտեմբեր  
ամսին անհրաժեշտություն է առաջացել կրկին վերանայել արտադրող կայաններից

առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության), «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագները և «էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկական շուկային մատուցվող ծառայության հաստատագրված ամսական վճարը:

2009 թվականի հոկտեմբերի 1-ից վերջնական սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագնի աճ թույլ չտրալու նպատակով, ՆՏ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության առաջարկության համաձայն, էլեկտրաէներգետիկական համակարգում առաջացող ֆինանսական ճեղքվածքը փակվել է «Որոտանի ՆԷԿՆ», «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ներից առաքվող էլեկտրական էներգիայի (հզորության) և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագների հաշվարկներում ներառված շահույթի և մաշվածության, ՆԱԷԿ -ից առաքվող էլեկտրաէներգիայի սակագնի հաշվարկում ներառված հատուկ ֆոնդերի և որոշ ծախսային հոդվածների նվազեցման հաշվին:

Նաշվետու տարվա ընթացքում ներկայացված հայտերի հիման վրա սահմանվել են 13 նորակառույց և վերանայվել 4 փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

Ինչպես հայտնի է, ՆՏ վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները՝ համաձայն ընդունված մեթոդիկայի, ելնելով սղաճի և փոխարժեքի փոփոխություններից՝ յուրաքանչյուր տարի վերանայվում են: 2009 թվականի նոյեմբեր ամսին վերանայվել են փոքր հիդրոէլեկտրակայաններից, հողմային էլեկտրակայաններից և կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի բազիսային սակագները:

Ընդհանուր առմամբ վերանայվել են «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի «Լոռի-1» հողմային էլեկտրակայանից, «Լուսակերտ Բիոգազ Փլանթ» ՓԲԸ-ի կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայանից և 43 փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

Նույն սկզբունքով, օգտակար ջերմային պահանջարկի հիման վրա համակցված արտադրության (կոգեներացիա) էլեկտրական և ջերմային էներգիայի սակագների հաշվարկի մեթոդիկայի համաձայն, հաշվի առնելով դրամի փոխարժեքի, սղաճի և վառելիքի գնի փոփոխությունները, վերանայվել է «Երևանի Մխիթար Ներացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ում արեղակայված ջերմային և էլեկտրա-

կան էներգիայի համակցված արտադրությամբ կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը:

Նաշվեփու փարվա վերջին ուսումնասիրվել և հաստատվել են երկդրույթ սակագնային համակարգում գործող էլեկտրակայանների կողմից հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացվող 2010 թվականի պայմանագրային և փնօրինելի էլեկտրական հզորությունների չափաքանակները:

«Նանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» ՆՏ օրենքի պահանջներից ելնելով՝ ճշգրտվել և հաստատվել են հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2010 թվականի անվանական կազմը և հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների փարեկան մեծությունները:

Ուսումնասիրվել և հաստատվել է «Երևանի ԶԷԿ» ՓԲԸ-ի ոչ բլոկային մասի մեկ կաթսա-մեկ փուրբին աշխատելու պայմաններում բացթողնված էլեկտրական և ջերմային էներգիայի վրա վառելիքի փեսակարար ծախսի հաշվարկման մեթոդիկան:

2008 թվականի դեկտեմբեր ամսին «Նայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն հայտ էր ներկայացրել հանձնաժողով՝ վերանայելու սպառողներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագները: Նաշվի առնելով ընկերության ֆինանսարկարտական գործունեության արդյունքները, միջին աշխատավարձի մեծության ավելացման անհրաժեշտությունը, ինչպես նաև ՆՏ պետական բյուջեից հատկացվելիք սուբսիդավորման կրճատումը, 2009 թվականի սկզբին վերանայվել են «Նայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպառողներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագները:

2009 թվականի փետրվար ամսին սակագների ճշգրտման առաջարկով հանձնաժողով է դիմել «Երևան Զուր» ՓԲԸ-ն: Սակագների ճշգրտումը պայմանավորված է մեթոդաբանությամբ ամրագրված ցուցանիշների, այն է՝ մանրածախ ջրամատակարարման ծավալների, փարեկան սղաճի, դրամ/եվրո փոխարժեքի և ընկերությանը մատակարարվող էլեկտրաէներգիայի սակագների նախորդ հաշվարկային փարում փեղի ունեցած փոփոխություններով: Նաշվի առնելով ջրի սպառման փաստացի ծավալների մոնիթորինգի արդյունքները, ինչպես նաև մեթոդաբանությամբ ամրագրված մյուս գործոնների ազդեցությունը, սահմանվել են «Երևան Զուր» ՓԲԸ-ի կողմից սպառողներին խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների մատուցման նոր սակագներ:


2009 թվականի ընթացքում հանձնաժողովի ուշադրության կենտրոնում է եղել բնակչությանը որակյալ և մաքուր ինֆրակառուցված ծառայությունների մատուցմանն ուղղված իրավափոփեսական դաշտի սրբեղծումը: Այդ նպատակով հուլիս ամսին



համապատասխան որոշմամբ դասակարգվել է միջազգային «ԱՅՓԻ» փարանցման ծառայությունը, սահմանվել է այդ ծառայությունների շուկան և շուկայում օպերատորների կողմից գերիշխող դիրք զբաղեցնելու չափորոշիչը: Այս որոշումը հնարավորություն տվեց միջազգային «ԱՅՓԻ» փարանցման ծառայությունների շուկայի ուսումնասիրության արդյունքների հիման վրա 2009 թվականի հոկտեմբեր ամսին «ԱրմենՏել» ՓԲԸ-ին և « Ֆայբրնեթ Քոնյունիքեյշն» ՍՊԸ-ին ճանաչել որպես շուկայում գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորներ և սահմանել նրանց կողմից մատուցվող միջազգային «ԱՅՓԻ» փարանցման ծառայության առավելագույն սակագնի հաշվարկման բանաձևը:

Նանձնաժողովի կողմից իրականացված վարչական կարգավորման ուղղակի միջոցներից զար, քայլեր են ձեռնարկվել նաև մեծածախ ինտերնետ հասանելիության ծառայությունների շուկայի ընդլայնմանն ու ինքնակարգավորմանը նպաստելու ուղղությամբ: Մասնավորապես, հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործման լիցենզիա է տրամադրվել «Ջի Էն Սի - Ալֆա» ընկերությանը, որը Նայաստանի փարաձքում կառուցել և Իրանի փարաձքում գործող օպտիկամանրաթելային հեռահաղորդակցության համակարգին է փոխկապակցել նոր միջազգային «ԱՅՓԻ» փարանցման կապուղի: Դրա շնորհիվ դիվերսիֆիկացվել են Նայաստան մուտք գործող միջազգային «ԱՅՓԻ» փարանցման կապուղիները, Էսկանորեն մեծացել է միջազգային ինտերնետային տրաֆիկը, ինչը նպաստել է նաև մեծածախ ինտերնետ մատակարարների միջև մրցակցության ձևավորմանը:

Նանձնաժողովի հերևողական աշխատանքի շնորհիվ ինտերնետ մեծածախ ծառայությունների սակագները, սկսած 2006 թվականից, անշեղորեն նվազել են:




Այսպես, «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից փրամադրվող կապուղու սակագինը 1Մբիթ/վ արագության համար 2006 թվականի ապրիլի 5 461 600 դրամ արժեքից 2008 թվականի հունիսին նվազել և կազմում է մոտ 1 474 560 դրամ, իսկ «Ֆայբրնեթ Քոմյունիքեյշն» ՍՊԸ-ի կողմից փրամադրվող կապուղու սակագինը 2007 թվականի դեկտեմբերի մոտ 1 193 000 դրամ արժեքից 2008 թվականի հունիսին նվազել և կազմում է մոտ 967 000 դրամ:

2009 թվականի ավարտին «ԱրմենՏել» ՓԲԸ-ի և «Ֆայբրնեթ Քոմյունիքեյշն» ՍՊԸ-ի կողմից մատուցվող ինտերնետ մեծածախ ծառայությունների սակագները 1Մբիթ/վ արագության համար՝ կախված ՏՏ դրամի և ԱՄՆ դոլարի հարաբերակցությունից, փափանավել է 174 000 դրամի սահմանում, ինչը հանգեցրել է հանրապետությունում վերջնական օգտագործողներին մատուցվող մանրածախ ինտերնետի գների նվազման:


2009 թվականի ընթացքում հանրապետության մանրածախ ինտերնետ հասանելիության ծառայությունների շուկա են մուտք գործել ինտերնետ հասանելիության նոր, լայնաշերտ անլար տեխնոլոգիաները, մասնավորապես, կոմերցիոն շահագործման են հանձնվել WiMAX և UMTS/3G տեխնոլոգիաների վրա հիմնված ցանցեր: Մրցակցության նոր պայմաններում ընդլայնվել է հարկապես մատուցվող ծառայությունների փեսականին, բարելավվել են դրանց որակական բնութագրերը, իսկ սակագները զգալիորեն նվազել են: Լայնաշերտ անլար տեխնոլոգիաների օգտագործումն էականորեն կրճատել է ինտերնետ ծառայություններից հեռախոսացանցի միջոցով (dial-up) օգտվողների քանակը:

2009 թվականի վերջում գրեթե երեք անգամ ավելացել է հանրապետություն մուտք գործող ինտերնետի հոսքը: Այսպես՝ 2008 թվականին այն կազմել է 1083,3 Մբիթ/վ, իսկ 2009 թվականի վերջում՝ 3674 Մբիթ/վ:


**Միջազգային IP փարանցման հոսքերն ըստ տարիների**



Ինտերնետ ծառայություններից 2009 թվականի ընթացքում օգտվել է 1 227 474 բաժանորդ (այդ թվում՝ GPRS և 3G տեխնոլոգիաներով օգտվողները), ինչը 2008 թվականի համեմատությամբ աճել է մոտ 48%-ով: Բջջային կապի ցանցերով ինտերնետ ծառայություններից օգտվողների քանակը 2008 թվականի համեմատությամբ աճել է 50%-ով:



2009 թվականի 4-րդ եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 80%-ով աճել է լայնաշերտ ինտերնետ ծառայություններից օգտվող բաժանորդների քանակը:



Նպաստելու ունենալով կանոնակարգել «ԱրմենՏել», «Ղ-Տելեկոմ» և «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ների հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև փոխկապակցման խնդիրները, 2009 թվականի օգոստոս ամսին հանձնաժողովը հասարակել է այդ ընկերությունների հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև 2010

թվականի հունվարի 1-ից կիրառման ենթակա փոխկապակցման ծառայությունների վճարների ժամանակացույցը, որով նախատեսվում է գործող փոխկապակցման վճարների կիսամյակային սկզբունքով նվազեցում 10-60%-ի չափով՝ ըստ ծառայության փաստաթղթերի և 11.4 դրամ միասնական վճարի կիրառում՝ սկսած 2011 թվականի հուլիսի 1-ից, բացառությամբ բջջային ցանցից դեպի Երևան քաղաքի ֆիքսված ցանց զանգի վերջնավորման 1 թույլի սակագնի, որը կկազմի 9 դրամ, ինչպես նաև բջջային ցանցում միջազգային մուտքային զանգի վերջնավորման 1 թույլի սակագնի, որը կկազմի 12 ԱՄՆ ցենտ (թուրք վճարները ներկայացված են առանց ԱԱՀ-ի):

Ելնելով Եվրոպական Միության անդամ երկրներում հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական բջջային կապի ցանցերում կարճ հաղորդագրության (SMS) վերջնավորման փոխկապակցման ծառայության համար կիրառվող վճարների և դրա փոփոխման իրադրության կանխատեսումներից, հանձնաժողովը 2009 թվականի օգոստոս ամսին հաստատել է «ԱրմենՏել», «Ղ-Տելեկոմ» և «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ների բջջային ցանցերում 2010 թվականի հունվարի 1-ից կիրառման ենթակա կարճ հաղորդագրության (SMS) և մուլտիմեդիա հաղորդագրության (MMS) վերջնավորման փոխկապակցման ծառայությունների վճարների ժամանակացույցը, համաձայն որի մինչև 2011 թվականի հուլիսի 1-ը նախատեսվում է նշված փոխկապակցման ծառայության գործող վճարների կիսամյակային սկզբունքով նվազեցում մոտ 73%-ի չափով:

Կարգավորվել է նաև «ԱրմենՏել», «Ղ-Տելեկոմ» և «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ների հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական բջջային կապի ցանցերում միջազգային մուտքային զանգի վերջնավորման փոխկապակցման ծառայության վճարը: Նանձնաժողովի որոշմամբ 2009 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2010 թվականի հունվարի 1-ը այն կկազմի 40 դրամ/թույլ:

Կարգավորվող ընկերությունների ֆինանսական և փոխնիկարմարման հաշվարկությունները հիմք են հանդիսանում կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունման, սակագների սահմանման ու վերանայման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման և լիցենզիայի պայմանների վերահսկման համար: Այդ առումով կարևորվում է կարգավորվող ոլորտների ընկերություններում ազգային հաշվային պլանին համապատասխանող հաշիվների և ենթահաշիվների նոր համակարգի ներդրումը, որը հնարավորություն է ընձեռում հստակ փարանջապել հիմնական (լիցենզավորված) և ոչ հիմնական գործունեության եկամուտներն ու ծախսերը, կարարել եկամուտների և ծախսերի մանրամասն հաշվառում և վերլուծություն: Այս համակարգն արդեն ներդրվել է էլեկտրաէներգետիկայի, գազամատակարարման բնագավառների և խմելու ջուր մատակարարող ընկերություններում, լրամշակվել են նաև ընկերությունների կողմից

հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ձևերը: Նշված աշխատանքների իրականացման արդյունքում 2009 թվականի ընթացքում կրճատվել են էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման և ջրային համակարգի ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ծավալները, ինչպես նաև լրամշակվել են Նայասփանի Նանրապետության ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող տեխնիկապնդեսական տեղեկատվությունների ձևերը:

2008 թվականին մշակվել և հաստատվել են «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող սակագնային կարգավորման ենթակա հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների ցանկը, ծախսերի բաշխման մեթոդաբանությունը և մատուցվող ծառայությունների սակագների հաշվարկման մեթոդիկան, որոնք հաշվի առնելով՝ հանձնաժողովը լրամշակել է «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից ֆինանսական հաշվետվությունների ներկայացման կարգը:

Նաշվի առնելով, որ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն և «Ֆայբրնետ Բոնյունիքեյշն» ՍՊԸ-ն հանձնաժողովի որոշմամբ ճանաչվել են միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայությունների շուկայում գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորներ, «Ֆայբրնետ Բոնյունիքեյշն» ՍՊԸ-ի համար ևս սահմանվել է ֆինանսական հաշվետվությունների ներկայացման կարգ:

2008 թվականից տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական գննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման լիազորություններն օրենքով վերապահվել են հանձնաժողովին, ինչի հիման վրա էլ հանձնաժողովը սահմանել է վերոհիշյալ ընկերությունների կողմից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ձևերը և ներկայացման կարգը:

Սահմանված կարգին և ձևերին համապատասխան, տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական գննության ծառայություններ մատուցող թվով 24 ընկերություններ հանձնաժողով են ներկայացրել տարեկան և եռամսյակային արդյունքներով ֆինանսական հաշվետվություններ, որոնց հիման վրա կատարվել է այդ ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն:

Նանձնաժողովի սահմանած ձևերին համապատասխան՝ ջրային համակարգի, էներգետիկայի բնագավառի լիցենզավորված ընկերությունները, «ԱրմենՏել» ՓԲԸ-ն, «Նայփոստ» ՓԲԸ-ն և «Նարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն ներկայացրել են եռամսյակային ֆինանսական հաշվետվություններ, որոնց հիման վրա կատարվել են նրանց ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերլուծություն:

Էլեկտրաէներգետիկական և ջրային համակարգերի գործունեության մասին հանրությանն իրազեկելու նպատակով հանձնաժողովն իր ինտերնետային կայքում

(www.psrc.am) հրապարակել է կարգավորվող ընկերությունների գործունեության փեխնիկապնփեսական ցուցանիշները:

### **3. Լիցենզավորում և լիցենզավորված գործունեության մոնիթորինգ**

Լիցենզավորումը կարգավորման այն կարևոր գործառնություններից է, որը թույլ է փալիս մրցակցության բացակայության կամ սահմանափակ մրցակցության պայմաններում կարգավորվող բնագավառներում գործունեություն իրականացնող ընկերությունների համար գործունեության միասնական չափանիշների սահմանման միջոցով հավասարակշռել սպառողների և այդ ընկերությունների օրինական շահերը, կարգավորման դաշտում գործող փարբեր ընկերությունների համար վարել միափեսակ քաղաքականություն, ինչպես նաև լիցենզավորված գործունեության մոնիթորինգի միջոցով պարասխանարվության միջոցներ կիրառել իրենց պարփականությունները ոչ պարշած կարարող ընկերությունների նկարմամբ:

Նանձնաժողովը 2009 թվականի ընթացքում էներգեփիկայի բնագավառում փրամադրել է փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման` 13, հողմային էլեկտրակայանի, ֆոտոէլեկտրական կայանի և շոգեգազային ցիկլով էլեկտրական էներգիա արարող «Նրագդան-5» կայանի կառուցման` 1-ական, էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արարողության կայանի կառուցման` 2, էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արարողության կայանում էլեկտրական էներգիայի արարողության` 1, փոքր հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արարողության` 12, ջերմային էներգիայի բաշխման ցանցի կառուցման` 1, բնական գազի ներկրման` 1 և էլեկտրական էներգիայի արարահանման 2 լիցենզիա: Մրացվել է լիցենզիաների գործողությունների ժամկեփների երկարաձգման 41 հայր, լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ գույքը գրավ դնելուն համաձայնություն փալու` 23, բաժնեփոմս կամ բաժնեմաս վաճառելուն համաձայնություն փալու` 9, լիցենզիան վերաձևակերպելու` 1, գույքի նկարմամբ իրավունքները փոխանցելուն համաձայնություն փալու 1 դիմում, որոնք սահմանված կարգով քննարկվել և բավարարվել են:

Նույն ժամանակահարվածում էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում փրամադրվել է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի` 22, ձայնային ծառայությունների մարուցման` 15, փվյալների հաղորդման և ինփերնեփ հասանելիության ծառայությունների մարուցման 59 լիցենզիա, ռադիոհաճախականությունների օգրագործման` 95 և համարների գրաղեցման` 31 և ջրային համակարգի օգրագործման 3 թույլփություն:

Նանձնաժողովի կարգավորման ոլորտում գրնվող ընկերություններն ապահովում են ՏՏ պեպակաւն բյուջեի գգալի մուտքեր՝ լիցենզիաների (թույլտւոթյունների) տուրքերի, ռադիոհաճախակաւնոթյունների տրամադրման և օգտագործման վճարների, կարգավորման պարտադիր վճարների, ինչպես նաև փոքր հիդրոէլեկտրակայանները լիցենզիաների գործողոթյան ժամկետում չգործարկելու համար գանձվող ֆինանսական երաշխիքների գծով վճարումների հաշվին: 2009 թվականին նշված աղբյուրներից ՏՏ պեպակաւն բյուջե փոխանցված գումարը կազմել է շուրջ 6,4 մլրդ դրամ, որի հիմնական մասը՝ շուրջ 4,9 մլրդ դրամը, ռադիոհաճախակաւնոթյունների օգտագործման գծով մուտքերն են:

Նանձնաժողովը մշտապես հետևում է կարգավորվող ընկերությունների կողմից լիցենզիաների պայմանների պահպանման և իրավական ակտերի պահանջների կատարման ընթացքին:

2009 թվականին «Նայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում իրականացվել է նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման գործընթացի ուսումնասիրություն, որի արդյունքում վեր են հանվել մի շարք թերացումներ և ընկերոթյանն առաջարկվել է միջոցներ ձեռնարկել նշված գործընթացն առավել թափանցիկ և վերահսկելի դարձնելու ուղղոթյամբ:

Կենցաղային նպատակներով բնական գազի սպառողների ներտնային գազա-սպառման համակարգերի շահագործման անվտանգոթյան մակարդակը գնահատելու նպատակով 2009 թվականին «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ում իրականացված սպառողների գազասպառման ներտնային համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման ուսումնասիրությունների ընթացքում հարցումներ են իրականացվել Նայաստանի ողջ տարածքում՝ շուրջ 1000 սպառողների մոտ: Թեև ներտնային սպասարկման աշխատանքների կազմակերպման գործում արձանագրվել է գգալի առաջընթաց, ընկերոթյանն առաջարկվել է ձեռնարկել միջոցներ տեղ գտած առանձին թերոթյուններն ու բացթողումները բացառելու նպատակով:

Բնական գազի մատակարարի կողմից սպառողների սպասարկման որակի բարելավմանն ուղղված աշխատանքների արդյունավետոթյունը գնահատելու համար, 2006 թվականին հաստատվել են բնական գազի մատակարարման համակարգում սպառողների սպասարկման որակի չափանիշների վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող տեղեկատւոթյան օրինակելի ձևերը, որոնք 2007 թվականին լրամշակել են: 2009 թվականի ընթացքում իրականացվել է հանձնաժողով ներկայացվող տեղեկատւոթյան հավաստիոթյան ուսումնասիրոթյուն, որի արդյունքում ընկերոթյանն առաջարկվել է մշակել և ներդնել տեղեկատւոթյան գրանցման միասնական համակարգ: Այդ ընթացքում շարունակվել է նաև սպառողների սպասարկման որակի

ցուցանիշների վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող փեդեկափության հիման վրա փեդեկափական բազայի ձևավորման գործընթացը, ինչը թույլ կտա սահմանել սպառողների սպասարկման որակի բազիսային ցուցանիշներ և հետագայում վերահսկել դրանց պահպանումը:

Վանձնաժողովի ուշադրության կենտրոնում է նաև ջրամատակարարման ոլորտում սպառողների սպասարկման որակի խնդիրը: 2009 թվականին ևս շարունակվել են խմելու ջուր մատակարարող «Նոր Ակունք», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Նայջրմուղկոյուղի» և «Երևան Զուր» ՓԲԸ-ների կողմից սպառողների սպասարկման որակի գնահատման վերաբերյալ փեդեկափության վերլուծության և հանձնաժողովի ինֆերենտային կայքում ([www.psrc.am](http://www.psrc.am)) եռամսյակային փեդեկափությունների հրապարակման աշխատանքները:

#### **4. Ներդրումային ծրագրեր և սպառողների սպասարկման որակի ցուցանիշներ**

Կարգավորման կարևոր գործոններից է նաև կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերը հանձնաժողովի հետ համաձայնեցման գործընթացը, որի դեպքում խնդիր է դրվում ներդրումներն ուղղել կարգավորվող բնագավառներում նորարական, ավելի էներգախնայող և արդյունավետ փեդեկափության կիրառմանը, սպառողներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը և մաշված սարքավորումների փոխարինմանը կամ ենթակառուցվածքների վերակառուցմանը: Այս համարեքստում հանձնաժողովը ջանքեր է գործադրում խրախուսելու կարգավորվող բնագավառներում արդյունավետ ներդրումների իրականացումը: Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ կարգավորվող ընկերությունների կարարած ներդրումների վերադարձի հետ կապված ծախսերը ներառվում են սպառողներին մատուցվող ծառայությունների սակագներում. այսինքն՝ ներդրումներն ուղղակիորեն ազդում են սակագների վրա և, որպես կանոն, կարճաժամկետ հեռանկարում վերածվում են դրանց աճին նպաստող էական գործոնների: Վաշվի առնելով այս իրողությունը, ներդրումների առավել արդյունավետ ուղղությունների բացահայտման և կարճաժամկետ, միջնաժամկետ ու երկարաժամկետ ներդրումային ծրագրերի առաջնահերթ ուղղությունների որոշման նպատակով հանձնաժողովը մանրամասն ուսումնասիրում և վերլուծում է կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերը:

2009 թվականի ընթացքում շարունակվել է էներգետիկայի բնագավառում կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող ներդրումային ծրագրերի ուսումնասիրման և համաձայնեցման գործընթացը: Վերլուծության են ենթարկվել ընկերությունների 2008 թվականի ներդրումային գործունեության արդյունքները և հրա-



պարակվել են համապարասխան վերլուծական տեղեկանքներ: Շարունակվել են նաև կարգավորվող ընկերությունների կողմից սպառողներին մատուցվող ծառայությունների որակի գնահատման չափանիշների կարարելագործման և վերահսկման աշխատանքները:

«Նայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից իրականացվող ներդրումային ծրագրերի ուսումնասիրության և համաձայնեցման գործընթացում գնահատման չափանիշների կարարելագործմանն ուղղված աշխատանքները ևս գտնվում են հանձնաժողովի ուշադրության կենտրոնում: Տիմնվելով արդեն իսկ կուրակված փորձի վրա, ընկերության ներդրումային ծրագրում սպառողների հոսանքագրկումների քանակի և տևողության, սպառողների մոտ թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի և տևողության ցուցանիշների ծրագրային մեծությունները սահմանվում են Նայաստանի Նանրապետության յուրաքանչյուր մարզի և Երևան քաղաքի համար: Այս մոտեցումը թույլ է տալիս ներդրումներն առաջին հերթին նպատակաուղղել առավել վարթար վիճակում գտնվող բնակավայրերի սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանը: Նարկ է նշել նաև, որ սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը, սկսած 2005 թվականից, յուրաքանչյուր եռամսյակ ամփոփվում և հրատարակվում է հանձնաժողովի վեբ կայքում: Նույն կայքում հրատարակվում են նաև հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագրեր իրականացնող ընկերությունների ներդրումային գործունեության արդյունքների վերաբերյալ վերլուծական տեղեկանքները:

2009 թվականին հանձնաժողովը քննարկել է «Նայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից համաձայնեցման ներկայացված 2009-2011 թվականների ներդրումային ծրագիրը և ընդունել համապարասխան որոշում՝ սահմանելով սպասարկման որակի ցուցանիշների նոր ծրագրային մեծությունները: Ամփոփվել են նաև ընկերության 2008 թվականի ներդրումային գործունեության արդյունքները՝ հաշվի առնելով Նայաստանի Նանրապետության մարզերի և Երևան քաղաքի համար սահմանված սպասարկման որակի ծրագրային ցուցանիշների կարարման մակարդակը:

2009 թվականին համանձնաժողովը համաձայնություն է տվել «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի 2009-2011 թվականների ներդրումային ծրագրին, ինչպես նաև ամփոփվել են ընկերության 2008 թվականի ներդրումային գործունեության արդյունքները: Ընդ որում, խնդիր է դրվել ընկերության 2011-2013 թվականների ներդրումային ծրագրի համաձայնեցման ժամանակ այս ընկերությունում ևս ներդնել ներդրումների առանձին ուղղությունների արդյունավետության գնահատման չափանիշներ:

Նանձնաժողովը շարունակում է փոքր հիդրոէներգետիկայի բնագավառի զարգացմանը միտված իր հետևողական քաղաքականությունը և յուրաքանչյուր տարի իր

ինքերեներային կայքում հրապարակում է այդ ոլորտի զարգացման միտումների վերաբերյալ վերլուծական տեղեկանք: 2009 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանրապետությունում գործում են 82 փոքր հիդրոէլեկտրակայաններ, ևս 67-ը գտնվում են կառուցման փուլում: Գործող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 102 ՄՎտ, որոնք միջին տարեկան հաշվով ունակ են արտադրելու շուրջ 315 մլն կՎտժ էլեկտրաէներգիա:

Ընկերություններին գնումների իրականացման ավելի ճկուն մեխանիզմներ կիրառելու հնարավորություն ընձեռելու նկատառումով, 2009 թվականից գնումների կարգերի սահմանման իրավասությունը վերապահվել է «Նայաստանի էլեկտրական ցանցեր», «ՆայՌուսգազարդ» և «Միջագային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ներին, «Տրանսգազ» ՍՊԸ-ին և «ՆրազԶԷԿ» ԲԲԸ-ին: Նանձնաժողովն այդ ընկերությունների համար սահմանել է միայն գնումների իրականացման սկզբունքները: Այդ առնչությամբ 2009 թվականին լրամշակվել են նաև ընկերությունների կողմից կատարված գնումների մասին հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունների ձևերը:

Նանձնաժողովը ջանքեր է գործադրում կատարելագործելու խմելու ջուր մատակարարող ընկերություններին ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջները: «Նայջրմուդկոյուդի», «Երևան Զուր» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ներն արդեն յուրաքանչյուր տարի հանձնաժողովի հաստատման են ներկայացնում սպառողների ջրամատակարարման տնտեսության փաստացի մեծությունները՝ տվյալ տարեկարգի դրությամբ, և դրանց ծրագրային մեծությունները՝ հաջորդ տարեկարգի համար: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս առաջնահերթ բարելավել առավել վարժար վիճակում գտնվող սպառողների ջրամատակարարումը: Նստակցվել են նաև գրաֆիկների հրապարակման պահանջները և դրանց մասին բաժանորդներին իրազեկման մեխանիզմները. ընկերությունները տարեկան երկու անգամ հրապարակում են իրենց սպասարկման տարածքի ջրամատակարարման գրաֆիկները՝ այդ մասին իրազեկելով հեռուստատեսությամբ և յուրաքանչյուր ամիս բաժանորդներին սպառած ջրի դիմաց ներկայացվող վճարման փաստաթղթերում ներառում են նրանց հաջորդ ամսվա ջրամատակարարման գրաֆիկի սկզբի և ավարտի ժամն ու րոպեն: Բացի այդ, հրապարակված օրաթերթերն անվճար ուղարկվում են տվյալ տարածքի տեղական ինքնակառավարման մարմիններին:

## **5. Սպառողների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների հետ տարվող աշխատանքներ**

2009 թվականին ևս հանձնաժողովի թափանցիկ և հրապարակային աշխատանքը միտված է եղել հանրության բոլոր շերտերի իրազեկության աստիճանի բարձրացմանը,

յուրաքանչյուր քաղաքացու տեղեկություն ստանալու իրավունքի իրացմանը: Սպառողների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների հետ սերտ համագործակցությունը շարունակել է մնալ հանձնաժողովի գործունեության առանցքում: Շարունակվել են նաև պարբերական քննարկումները, մոնիթորինգների անցկացումը հասարակական կազմակերպությունների, սպառողների և կարգավորվող ընկերությունների մասնակցությամբ՝ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների սպառողներին հուզող հարցերին, հարցադրումներին և բողոքներին պատշաճ ընթացք տալու նպատակով:

2009 թվականի ընթացքում սպառողներից ստացվել են 708 հարցադրումներ և բողոքներ, որոնցից 203-ը՝ գրավոր, 505-ը՝ հրապապ հեռախոսով և ընդունելությունների ընթացքում: Դրանցից 318-ը դրական լուծում են ստացել, 18-ի վերաբերյալ մատակարար կազմակերպություններում անց են կացվում ուսումնասիրություններ, 47 բողոքներում ներկայացված փաստերը չեն համապատասխանել իրականությանը, 325-ի վերաբերյալ տրվել են պարզաբանումներ՝ գործող օրենքների, կարգերի և այլ նորմատիվ ակտերի համաձայն: Սպառողների բողոքները տեղում ուսումնասիրելու նպատակով էլեկտրաէներգիայի, գազի, խմելու ջրի մատակարարների հետ համարեղ իրականացվել են ստուգայցեր, ձեռնարկվել են համապատասխան միջոցներ բարձրացված հարցերը կարգավորելու ուղղությամբ:

Արձանագրելով 2009 թվականին էլեկտրոնային բովանդակության համահայկական երրորդ մրցանակաբաշխությունում հանձնաժողովի կայքի առաջին կարգի մրցանակի արժանանալու փաստը, հանձնաժողովը շարունակել է հարստացնել իր ինտերնետային կայքը, որի յուրաքանչյուր այցելու կգտնի իրեն անհրաժեշտ տեղեկությունը:

Ինչպես նախորդ տարիներին, 2009 թվականին ևս հանրությունը ՁԼՄ-ներով ծանուցվել է հանձնաժողովի նիստերի մասին, մեկնաբանվել են ընդունված որոշումները, լրագրողների համար կկազմակերպվել են ճեպագրույցներ: Նանրության համար հետաքրքրություն ներկայացնող որոշումների մասին հաղորդագրությունները, հանձնաժողովի գործունեությանն առնչվող պաշտոնական տեղեկատվությունները հրապարակվել են մամուլում, էլեկտրոնային լրատվամիջոցներով և փոստով: Այդ նպատակով հանձնաժողովի նախագահը, անդամները, աշխատակազմի մասնագետները հասարակական հնչեղություն ունեցող որոշումների, հարցերի շուրջ էլեկտրոնային լրատվամիջոցներով և տպագիր մամուլով պարբերաբար հանդես են եկել ճանաչողական բնույթի հաղորդումներով, պարզաբանումներով և հարցազրույցներով:

Շարունակվել է նաև մամուլի հրապարակումների ամենօրյա վերլուծությունը: Լրատվամիջոցների հաղորդած տեղեկությունները, ընկերություններից համապա-

տասիսան պարզաբանումներ ստանալուց հետո, օգտագործվել են մարուցվող ծառայությունների որակի մասին հանձնաժողովի նպատակային ուսումնասիրություններում:

## **6. Նամագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ**

Նանձնաժողովը, 2009 թվականին համագործակցելով Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովների փարաձաշրջանային ընկերակցության (ERRA), ԱՊՏ Էլեկտրա-Էներգետիկական խորհրդի գործադիր կոմիտեի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID), ԱՄՆ-ի Էներգետիկայի ընկերակցության հետ, INOGATE ծրագրի շրջանակում իրականացրել է հանրային ծառայությունների մարուցման փորձի ուսումնասիրություն, միջազգային փորձի ուսումնասիրման նպատակով հանձնաժողովի մասնագետները մասնակցել են նույն ծրագրի շրջանակում անցկացված «Էներգետիկական անվտանգություն» և «Էներգետիկայի կարգավորումը անցումային փուլերում» թեմաներով սեմինարներին, ինչպես նաև աշխատանքային խմբի հանդիպմանը:

Բացի այդ, հանձնաժողովի մասնագետները մասնակցել են Էներգետիկայի կարգավորող մարմինների փարաձաշրջանային ընկերակցության 2009 թվականի ընդհանուր ժողովին, ինչպես նաև Էներգետիկայի կարգավորման և ներդրումների վերաբերյալ 8-րդ կոնֆերանսին: Շարունակվել է մասնակցությունը նաև ERRA-ի կողմից կազմակերպվող վերականգնվող էներգետիկայի կարգավորման վերաբերյալ դասընթացներին:

2009 թվականին պարզաճ մասնակցություն է ապահովվել նաև ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կազմակերպած մարդկային և ինստիտուցիոնալ ներուժի զարգացման ծրագրի շրջանակներում «Ջրային ենթակառուցվածքի կապիտալ ֆինանսավորման նորարական մեխանիզմներ» թեմայով սեմինարին և Ստամբուլում անցկացված «Տարաձաշրջանային փոխադրման ցանցի զարգացումը» թեմայով համաժողովին:

Նանձնաժողովի անդամները 2009 թվականին Միասկում մասնակցել են ԱՊՏ կապի խորհրդի կոմիտեի 41-րդ նիստին և «Միացնենք ԱՊՏ երկրների փարաձքը» թեմայով փեդերալական հաղորդակցության փեխնոլոգիաների վերաբերյալ միջազգային հանդիպմանը, ինչպես նաև ԱՄՆ-ի կոմունալ ձեռնարկությունների կարգավորման հանձնաժողովների անդամների Ազգային ընկերակցության (NARUC) կողմից կազմակերպված Էներգետիկայի կարգավորման IV միջազգային համաժողովին:

## ՏԵՂԵԿԱՆՔ

**ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի գործունեության ֆինանսավորման հաստատված բյուջեի, փարեկան ճշտված բյուջեի, ֆինանսավորման, դրամարկղային և փաստացի ծախսերի մասին**

*հազ. դրամ*

Նոդ/համ	Բյուջեային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումը	Նաստատված բյուջե	Ճշտված բյուջե	Ճինսն-սավորում	Դրամանարկ-դային ծախս	Փաստացի ծախս
	<b>Ընդամենը</b>	<b>417970.8</b>	<b>417970.8</b>	<b>398444.9</b>	<b>398222.2</b>	<b>397048.3</b>
411100	Աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ վճարումներ	321516.0	321516.0	321516.0	321516.0	321516.8
413100	Պարարկ սոցիալական ապահովագրության վճարներ	33619.2	33619.2	32757.6	32757.6	32424.9
421200	Էներգետիկ ծառայություն /գազ, էլ. էներգիա/	5945.0	5945.0	5809.6	5809.6	5467.3
421300	Կոմունալ ծառայություն /ջուր, աղբահանություն/	380.0	380.0	181.1	181.1	161.5
421400	Կապի ծառայություն / հեռ.կապ, իրպեկ, ռադիո, փոստ/	7208.0	7208.0	7208.0	7208.0	6761.4
	Գործուղումներ և շրջագայության ծախսեր	15321.0	15321.0	5896.1	5689.3	5689.3
422100	- հանրապետության ներսում		0.0	494.8	494.8	494.8
422200	- արտասահմանյան		0.0	5401.3	5194.5	5194.5
423400	Տեղեկարվական ծառայություն /թերթեր, ամսագիր, հայտարարությունների տպագրություն/	950.0	950.0	796.2	796.2	762.7
423700	Ներկայացուցչական ծախսեր	700.0	700.0	300.0	300.0	300.0
423900	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	669.4	669.4	534.1	534.1	534.1
425200	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ վերանորոգում /ավտոմեքենաների, հովացման համակարգի, համակարգչային տեխնիկայի/	4352.3	4352.3	2695.8	2695.8	2695.8
426100	Գրասենյակային նյութեր	6200.0	6200.0	5425.1	5425.1	5425.1
426400	Տրանսպորտային նյութեր/բենզին, անվադողեր, հակասառիչ հեղուկ, յուղ փեխ. սպուգում/	7775.7	7775.7	4986.8	4986.8	4986.8
426700	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	750.0	750.0	699.2	699.2	699.2
426900	Դրամաշնորհներ	1500.0	1500.0	1482.3	1466.4	1466.4
482300	Այլ ծախսեր	100.0	100.0	57.0	57.0	57.0
512100	Տրանսպորտային սարքավորումներ	9000.0	9000.0	8100.0	8100.0	8100.0
512200	Վարչական սարքավորումներ	1984.2	1984.2			